


վրայօք քաղքին դատաւորը կը համարի թէ, մէկալինուրն վրայ հսկողութիւն կրնայ ընել, վերակեցու զնէ. ու ինչ որ սոսկայ հրամայէ, մէկալ ձե հոգին, ընդ պատժով երեք ֆիօրին տուգանաց իրեն հնազանդելու կը պարտաւորին: Աս բաւական չէ, ասոնց օգնութիւն տրուեցաւ զեռ 10 հոգի հետեւակ, որոնք քաղքին մէջ պիտի քալէին: Ասանկով՝ վերոյգրեալ չորս գիշերապահին հետ, ձիաւոր ու հետեւակ պահանջողաց թիւը 29ը եղաւ. որոնց զորձքը պիտ'որ սկսէր, իրիկուան ժամը իննին: Ձիաւորները պիտ'որ ունենային հետերնին սուր ու ատրճանակ և կամ թուր ու հրացան:

Բայց, որչափ պարագաներէն կրնանք հետեցընել, այս նոր կարգադրութեամբ ալ, քաղքին ներքին խաղաղութիւնը տեղը չեկաւ: Եւ որովհետեւ խոտութիւնները կը շարունակուէին և « Աստուծոյ ու մարդկան օրինաց զէմ » անկարգութիւնները կը շատնային, որպէս զի յստակուի քաղաքն այն անկարգութիւններէն՝ հասարակութիւնն օստիկանութեան վերաստեուչներ դրաւ, որ այս տեսակ բաներուն դէմ աչուընին բանան: Ասոնց իշխանութիւն տրուեցաւ, թէ ո՛ր և է տեսակ մարդ, ըլլայ ան քաղաքացի, կամ օտար, կամ վարձակալ կամ աւատառու, որ ինչ և իցէ կերպով կասկածաւոր բանի պատճառ տայ, կարենան բռնել ու բանտ զնել առանց դատաւորին հրամանին. ու զիրենք՝ ըստ իրենց զորձոյն պատժել: Քաղքին ապահովութեանը վրայ հսկող դրաւ վարչութիւնը զԱղաչայ թորոս Գէօրգօզեանց և զԱ. Մանուկ Շիմիլոյցեանց: Ասոնք՝ իրենց օգնութեան կրնային առնուլ, ծառայութեան մէջ չեղող քաղաքաբաշխութեան ծառաներ ու պահապանները. և ի գիպուածի հարկաւորութեան նաև բերդին պահանջները: Աւելի հարկաւոր զէպքբու մէջ նոյն իսկ քաղաքացիք մանակից պէտք էին ըլլալ, կասկածաւոր մարդիկը բռնելու մէջ: Վասնզատր մարդիկը բռնած աստն յետաւորստչներն ալ պատժուած տուգանքէն մաս կ'ընդունէին: Սակայն գող բռնած ատեննին, դատաւորին ձեռքը տալու էին զանհիկայ: Այս վերջիններու տուգանքէն իրենց մաս չէր իյնար:

Ա. Փիփաս

Շաքայարեյի

ՄԵՐ Ը ՏԱՌՆ Ձ, Ե ԵՒ Ս ՏԱՌԻՑ ՀԵՏ



ԱՅԴ երեք՝ գ, շ և ս սուր կամ շշող տառեր երբ գտուին բառից սկիզբը՝ բաղաձայն տառէ առաջ, բնութեամբ կ'առնուն ը տառն՝ ՚ի սկիզբն կամ ՚ի վերջ իւրեանց, — ուր այլք լոկ ՚ի վերջն, — և նորա հետ առանձին վանկ կը կազմեն. իսկ ձայնատրէ առաջ գտուելով՝ կը միանան նորա հետ առանց ըի: Համեմատ մեր հասարակ սովորութեան այսպէս կը գործածուին ուրաւ.

Չ իբր նախդիր՝ առ հասարակ ըզ կը կարդացուի, որպէս ըզբան, ըզլոյս, ըզծառ: Բայց իբրև մասն բառի, ըստ բաժանման Հ. Ա. Բազրատունոյն՝¹ յառաջ քան նայ տառեր կը կարդացուի զը. որպէս զըլանամ, զըմուռս, զըրաւ. — նոյնպէս՝ եթէ կրկնուի, զոր օրինակ զըզուել. — նոյնպէս՝ երբ իւր մօտ նախնաբար արմատ ունեցած լինի ի կամ ոչ, որպէս զիրկ՝ զըրկանք, զուտ՝ զըտել: Իսկ ըզ կը հնչուի՝ իւրմով ածանցուած բառից սկիզբը, որպէս ըզգնամ, ըզկնի, ըզկծիմ. — նոյնպէս՝ այլ ո՛ր և է ոչ նայ բաղաձայնից առաջ, որպէս ըզբօսանք, ըզգետ, ըզգասա:

Շ առ հասարակ կը կարդացուի չը, որպէս չըլանամ, չըղթայ, չընորհ, չըշնչին, չըպարել, չըսայլ, չըրտնուլ, չըփոթ, չըբթել: Իսկ ըշ՝ միայն այս բառից մէջ, ըշկահին, և ըշապ, ըշտեմարան, ըշտոգանեմ. այսինքն նախ քան զտին, և քան զկէն միանգամ:

Ս կը կարդացուի սը՝ նայից մօտ, որպէս սըլաք, սըմբակ, սըրահ. — նոյնպէս՝ ի և ոչ արմատից կերպարանափոխութեամբ, որպէս սին՝ սընտի, սուտ՝ սըտել: Իսկ ըս՝ ոչ նայ տառից հետ, որպէս ըսպա, ըստոյզ, ըսթափ. — նոյնպէս՝ ըստ նախդրիւ ածանցից մէջ, որպէս սագիւտ, ստերիւրել, և այլն, որ է՝ ըստ—գիւտ, ըստ—յերիւրել: Եւ ըս և սը՝ ի բառն ըսփիւռ, ըսփուել, սրփուել:

Դա ընդհանուր սահման մի է՝ մեր և կամ մեզմէ ոչ շատ հեռի նախորդաց անհատատ սովորութենէ հանուած. սակայն զեռ չէ պարզ, և ոչ զորացուցիչ: Ինչո՞ւ երբեմն այսպէս և երբեմն այնպէս հնչուին՝ մօտաւոր բաղաձայնի փոփոխութեամբ, և ոչ միօրինակ: Ահա թէ՛ ո՛րքան լծոյլ է այդ սահման:

Նայ տառից մօտ զ պիտի հնչուի զը. և ահա նորա հակառակ՝ « զմայլ » արմատի և իւր այլ և այլ ածանցմանց մէջ մ նայի հետ կը հնչեմք ըզ: Շ միշտ չը պիտի հնչուի, և միայն չորս բառի մէջ ըշ՝ առանց ո՛ր և է պասնառի: Ս ոչ նայ տառից մօտ ըս պիտի հնչուի. և նորին հակառակ՝ « սիալ » և իւր բարգուծեանց և ածանցմանց, սիւրանամ և իւրոց, սիւուր, սպտուր, սփուել և այլ քանի մի բառից մէջ սը կը հնչեմք: Մի՛ թէ զ, շ և ս միանգամայն նոյն սեռի վերաբերեալ շտոզ ստառեր չէն. և ինչո՞ւ բոլորն այլ նոյնպէս հնչուին, ըզ՝ ըշ՝ ըս կամ զը՝ չը՝ սը, յիշեալ զանազան հանգամանաց մէջ. այլ մին մերթ այսպէս, և միւսն մերթ այնպէս:

Երբաւի խախտտ է այդ սահման. բայց հարկ է նա և խոտտովանիլ՝ թէ զա ինքեան թիկունք ունի հայ մեծամասնութեան զրաւոր և բերանացի սովորութիւնը, թերևս եօթն և աւելի դարերէ սկսեալ: Սակայն եթէ ժողովրդեան յարափոխ սովորութեան ազդեցութենէ հեռի կայով՝ հետադառեմք յիշեալ տառից հնչման կերպը հնութեան մէջ, նոր սահման՝ նոր կանոն կը գտնեմք: Եւ է այս պարզ և դիւրահաս կանոնս. զ՝ որպէս նախդիր և որպէս

1. Քերական. զարգ. 1406. — Հ. Արս. Այան. Քննական քերական. 917, 974, 975:

մասն բառի, և շ և ս՝ ամէն բառից սկիզբը, — բաց 'ի նայնաւորաւ սկսողաց, — հնչել զը, շը և սը: — Ահա թէ ի'նչ հիմն ունի դա:

Ձ որպէս նախդիր, իւր սկիզբը ը տառն ամենեկին յարմարութիւն չունի: Սա և ոչ նորա անուան (զայ) մէջ կայ. և է այն ծանօթ եկամուտ զօգիչ տառ՝ որ կը մտնէ երկու բաղաձայն տառից մէջ, երբ չունին նորա այլ ձայնաւոր տառ իւրեանց մէջ: Իւր պաշտօնն է կապել զայնս, որ կը լինի՝ մտնելով նոցա մէջ. ապա ուրեմն անսեղի է՝ զ բաղաձայն նախդիրն այլ բաղաձայն տառից յարելու համար՝ տանիլ դնել գուրսը, ըզտուն զրել՝ և ոչ զըտուն, որ ժամանակ զօգիչ չլինիր:

Ձ ինքն առանձինն է միակ նախդիր, իսկ ը եկամուտ՝ որպէս ըսի. արդ ը կանխելով քան զ, ինք կը լինի նախդիր և ոչ նա. և այս երկրորդ անստեղութիւն:

Ձայի նման մի նախդիր է և ց. ինքն այլ բաղաձայն սկզբնաւորութեամբ բառից հետ՝ կը կարօտի ը տառին: Այլ ինքն սրպէս նախդիր՝ և նա որպէս զօգիչ, կը կանխէ միշտ քան զայն. ցը՝ և ոչ երբէք ըց. նոյնպէս էր և է նախնեաց՝ որպէս կը ցուցնեն զըշաղիբը՝ և մեր օրեր: Ձ ևս որպէս նախդիր՝ հարկ է ուրեմն որ կանխէ քան զնոյն ը:

Ձայի նման են նաև չ մակբայ և տ պակասութիւն ցուցնող տառեր, որոց վերջը կը մնայ միշտ եկամուտն ը. որպէս չըզայ, չըմարթու, տըզետ, տըկար, և ոչ երբէք ըչ կամ ըտ: — Այս՝ մասամբ զ նախդիր:

Ձ որպէս մասն բառի, շ և ս եթէ իւրեանց սկիզբը կրէին ը, այն ժամանակ արմատական և բնական տառ կը լինէր այն՝ և ոչ եկամուտ: Մեր լեզուի մէջ յիրաւի ունիմք ը սկզբնաւորութեամբ խուճի մի բառեր. սակայն վերջինքս նա և 'ի գրութեան անպակաս ունին զայն. նախնիք ոչ երբէք կը զեղչեն զայն. տես ը տառն 'ի բառգիրս: Արդ այս տեղ երկու հարցեր ընդ առաջ կ'եղնեն մեզ. առաջին, եթէ կայ ը՝ թէ զ, շ, ս սկզբնաւորութեամբ և թէ վերջին կարգի բառից սկիզբը, ինչո՞ւ երկու կարգի մէջ այլ չեն զրած զայն նախնիք. երկրորդ, եթէ նա և առաջին կարգն ը 'ի սկիզբն ունի իբրև արմատական տառ, ի՞նչպէս կարելի էր ջնջիլ այդ տեղէն, ուր հարկ էր գէթ երկու ձևով այլ գրուած լինել, ըզ՝ ըշ՝ ըս և զ՝ շ՝ ս՝:

1. Միայն շ և ս տառի սկսած՝ շտապ և շտեմարան, սթափ և սպունգ բառեր կան բառգրոց մէջ, որք ունին ըշտապ և ըշտեմարան, ըսթափ և ըսպունգ ձևերն այլ, յայտնի չէ՝ ուստի առնուած. որոց վերջինն իրաւացի է, Թարգմանութիւն լինելով յն. σπόγγος (սպոնգոս) կամ պրս. իսֆունճ բառից: Սակայն լոկ երեք բառեր՝ հաւանական է՝ թէ այդպէս արտասանող նորագոյն գրչագրի պատուղ են. և ը սկիսմայ գրուած է. թէ ոչ հարկ էր գրել զայն ամէն տեղ զ՝ շ՝ ս տառից մօտ. և կամ հարկ էր մեզ կարծել թէ այդ գրչագիր կամ գրչագրիք սոսկ յիշեալ երեք բառից սկիզբը կը նախադասէին ը, որով և այնպէս զրեք են: — Ըստ և ստ գրութեանց մասին խօսեցանք յէջ 530: — Ը կը վերանայ կամ կը գրուի նաև տ տառի սկսած բառից սկիզբը. բայց՝ որպէս յայտնի է, ը ապի մօտ բնական է

մինչ երկրորդին մէջ անխափան պահուած է միշտ, և չգրեւն սխալ կը համարուի: Այլ ամենէն այս կը հետևի՝ թէ զ՝ շ և ս իւրեանց սկիզբը բնաւ ը շունէին նախնեաց օրեր:

Մեր մէջ կան շ և ս սկզբնաւորութեամբ բառեր, որք կամ լծորդ են օտարաց հետ՝ կամ նոցա թարգմանութիւնք. և հետևաբար նոցա համաձայն հնչելի են շը՝ սը կամ ըը՝ ըս: Այսպէս ըստ այլ և այլ բառգրոց՝ շտապ է պրս. շիթափ, և հյ. շութափ. շտեմարան ածանց է ֆն. σίτος (սիտոս կամ շիտոս) արմատէն՝ որ է ցորեան և այլն, շտեմարան, կամ շտեմա-սան. — սպայ՝ պ. սիփան կամ սիփէհ, և հյ. սեպուհ սպուդ՝ պ. սիփէնտ. սպասաւար՝ պ. սիփէհ սաւար. սպայապետ կամ սպարապետ՝ պ. սիփէհնապետ, կամ սիփէրապետ. սպարակիր՝ պ. սիփեր՝ վահան բառէ և հյ. կիր արմատէ. սպիտակ՝ պ. սիփիտաղ. ապսպարեմ՝ պ. սիփարիշ՝ պատուիրեւն. և այլն: Սոցա մէջ օտարաց շի և սի (ش, س) փոխուեր են շ և ս, որոց հետ ՚ի հարկէ կայ ը սառն այլ. զի շէ հնար՝ թէ ին բոլորովին անհետացած լինի, այլ միայն կերպարանափոխած: Բայց սկիզբը թէ վերջը մնացած է. — յայտնի է թէ հոն՝ ուր նոցա ին աներևութեացած է. մանաւանդ որ մեր լեզուի մէջ ի լծորդ է ընդ ը. որպէս յիտուն, յինապետ և յըտուն, յընապետ. զիր՝ զըրոյ, ծիր՝ ծըրի, սիրտ՝ սրբտի, և այլն: Այս ուրեմն յիշեալ բառք պիտի կարդացուին շըտապ՝ ևս փոխան շութափի ոտին, շտեմարան, սըպայ՝ նաև փոխան սեպուհի եչին, սըպարապետ, սըպիտակ (զաւառաբարբառոց մէջ այլ կայ սիպակ կամ սիպիտակ), և այլն, հանդերձ իւրեանց բարգոյթեամբք և ածանցմամբք՝: — Մակայն մեզ իբր աւելի զօրաւոր փաստ՝ փնդոմբք նախնեաց կարծիքը:

Հին գրչագրերէն մինչև ցժ՛ի դար, որչափ ինձ ծանօթ են, երկաթագիր կամ բոլորգիր, նոքա՝ որ սովորութիւն ունին զբաղարձի ժամանակ ը գործածել-հակառակ այլ գրչագրաց՝ որք բնաւ չեն գործածեր, — ամէնն այլ զ, նախդիր լինի թէ մասն, և ս կը գրեն միշտ զը և տը. նոյնպէս և շ

և ոչ օտար. տես ՚ի քերականս. իսկ զայի՝ շայի և սէի մօտ եկամուտ. ուստի և ըս և ս գրութիւնքն համազօր են ըստ և ստ գրութեանց. բայց նոյնպիսի հարկ չկայ որ ըն զ՝ շ՝ և ս առաից հետ այլ կանխէ քան զայնս:

Ց. Յիշեալ պրս. բառերէն ոմանք ունին նաև երկրորդ ձևեր. շիթապ՝ իթապ, սիփա՝ իսփահ, սիփէհնապետ՝ իսփէհպետ, սիփէնտ՝ իսպէնտ, իսփէր՝ իսփէր, որք կազմած են յաւելմամբ ալփ ՚ի տառին ՚ի սկիզբն: Սակայն մեր բառք առաջին ձևերէն հանուած են. որովհետև նախնիք առաջադիր ալփը բնաւ ը չեն թարգմաներ կամ գեղչեր, այլ ա. որպէս իսփէրը՝ ասպար, իսփէրիզ՝ ասպարէզ, իսթան՝ աստան (Հայաստան և այլն), ազատ կամ էզատ, ազատ. աշխատարա կամ -րէ՝ աշկարայ, էսպ(ձի)՝ ասպրզէն, ասպրտակ, և այլն: Գոյն օրինակաց մէջ կը տեսնեմք թէ ալփը բառից մէջ ևս ա կը թարգմանեն, թէպէտ բնագրի մէջ տարբեր հնչուի: Իսկ բարգոյթեանց մէջ առանց նախադաս ալփի ձևերը կը գործածեն միշտ, որպէս կը տեսնեմք:

առ հասարակ չը, բայց 'ի (յէջ 530) յիշուած չորս բառերէն՝ զորս սողի ծայրը գրադարձութեամբ գրուած քանել չկարողացայ գրչագրաց մէջ, բայց 'ի մի բառէ՝ որոյ միջին վանկի մէջ կը գտուի չը կամ բջ հնչումն (յէջ 534):

Նոյն հնագոյն գրչագրաց մէջ՝ նշանաւոր անձանց համար, ուստի և ընտիր, կամ թէ ոչ նոյնպիսի՝ այլ առանձին խնամով գրուածներէն յիշեմք զոմանս: — Աւետարան մի, գրուած յամի տեառն 1007, հրամանաւ Յովհաննէս իշխանապն անձի մի. — աւետարան մի ևս, գրուած 'ի 1193, Սկեւոսայ վանաց մէջ, ս. Ներսէս Համբուռնեցոյն համար. մին և միան երկաթագիր. — Յայսմաւուրք բոլորգիր, անթուական, 'ի Գրիգորէ Անուարգեցոյ, Աւին Վազաւորի համար. — ձառք ս. Բարսղի երկաթագիր, գրեալ 'ի 1172, Հաղբասայ վանաց մէջ. — աստուածաշունչ մի ամբողջ՝ բոլորգիր, անթուական՝ բայց հին և ընտիր. — և այլ մեծագիր կամ փոքրագիր՝ նոյնպէս հնագոյն և կամ հնագոյներէ հաւատարմութեամբ գաղափարած նորագոյն գրչագիրք:

Դնեմք հոս նոյն հնոց միջէն քանի մի օրինակներ, որք այժմու սովորութեան հակառակ լինին:

« Զըպպիրս ժողովրդեանն. Յակովբ ծնաւ զը-Յուգա, զը-Դաւիթ արքայ, զը-Սարգոմփն. Ոչ գիտէր զը-նա. Ա՛ս զը-մանուկդ և զը-մայր իւր. Ես մկրտեմ զը-ձեզ. Ոչ հարցես զը-քարի. Զը-դա, զը-սուր. — Հանեալ զը-գարդն յանձնէն. Պարտ է ամեւ զը-մտաւ. Նզովեաց զը-կուռնն. Հարին զը-գլուխն. — Զը-բմիշխս, զը-ժանրացեալն, զը-վանեալն, զը-կենդանին. Քան զը-խաղաղանալն. Քան զը-պարզաբար սնանիլն. — Եւ լուան զը-ձայն զգնալոյ տեառն. Վախճանեցես զը-հունձդ. Զը-զաակ նորա. Ոչ ևս պնդեցան զը-հետ՝:

« Եւ ոչ Սարգոմփն... զը-գեցաւ. Զը-գոյշ կացէք անձանց. Եւ էր Յովհաննէս զը-գեցեալ. — Կոչման անզը-գամ հեթանոսաց. Զանզը-գամս սպանանէ բարկութիւն. Տեսի անզը-գամաց արմատս ձգեալ:

« Սը-տուգեաց 'ի մոզուցն. Եւ սը-պանանիցեն զը-նոսա. Մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սը-պանանեն զմարմին. — Եւ ասէ Հուրթ ցոր-կեսուրն. Արդ սը-տացիր ասալի սոցա. Մասն ինչ 'ի սը-պասուց. Բայց սը-կտանի յաւորց Յովսեայ. Որոց սը-պանայ Աստուած. Սը-պանայ սկզբնաչարին. Սը-պան Աբեսաղով՝ զեղբայր իւր. Սը-պանաւ Աբեսաղով. (սը-պանել կայ նաև զաւտաբարբառոց մէջ):

1. Անթիւ են զը նախդիր գրութեան օրինակներ. որովհետեւ որ և է զրոց աւելն իյի մէջ քանի մի անգամ կը գործածուի. ուստի և յաճախ կը հանդիպի տողի ծայրը, մանաւանդ երկնոկ էջերու մէջ. մինչ այլ բառեր գ կամ ս տառիւ սկսած և առ մեզ բզ և ըս հնչմամբ, կամ ը՝ բջ հնչմամբ՝ որպէս ըսի, սակաւաթիւ են, և սակաւ անգամ կը պատահիմք առաջին վանկին երկրորդէն գրադարձութեամբ բաժանմանս:

« Ի միջոյ ժանեաց նոցա կորզէի զյափշը-տակութիւն. (որ է՝ յափ-շատ կամ շուտ-արկութիւն՝ ըստ նախնեաց և Հայկզ. բառարոց, կամ ապշուպեմ բառէ) :

Այդ օրինակաց մէջ ը յետ զայի և սէի դրուած չէ առանց դիտաւորութեան, որպէս թէ լոկ տողից մնացորդն այնու լրացնելու համար. թէ այդ գործ և թէ կարծիք անտեղի են անշուշտ : Եւ նախնիք մի և նոյն հին և ընտիր գրչագրաց մէջ ընդ հակառակն ընտրութեամբ կը գործածեն զայն ը. և մինչ յետոյ կը գնեն քան զայ և սէ՝ ի սկիզբն բառից, այլուր ճշդիւ հոն կը գնեն ուր կը հնչուի ըստ օրինի : Այսպէս, Գայ առ Յովհաննէս մկրտաիւ. Ի քէն մկրտաիւ, և ոչ մկրտաիւ. Մի՛ տայք զսրբութիւն շանց և ոչ զսրբութիւն. Պրզ-ծեն զշաբաթն, և ոչ պրզ-ծեն. Վայ ձեզ դրպ-րաց, և ոչ դպր-րաց. Զմբծ-ղուկս քամէք, և ոչ զմծր-ղուկս. և այլն : Ապա ուրեմն առաջին օրինակաց մէջ այլ հոն են գրեր՝ ուր կը հնչէին. զ և ս հնչուեր են միշտ զը և սը՝ առհասարակ ամենայն տեղ :

Ինչպէս վերոյիշեալ օրինակաց մէջ կը տեսնեմք, զ տառիւ սկսող բառք եթէ ամանցուին ևս ան պակասութիւն ցուցնող մասնկամբ, դարձեալ զը պիտի հնչուի զն. որպէս էր անզը-գամ, զանզը-գամս, անզը-գամաց. սոյնպէս է և այդպիսեաց գրադարձն : Նոյնպէս պիտի լինի հետևաբար և ս. սը-տու-պեսց՝ անաը-տոյզ, սը-պաստց՝ անաը-պասաոր, սը-կսանի՝ անաը-կիզբն, և այլն : Նմանապէս այլ բարդութեանց մէջ՝ խաւարըը-գետտ, եղբայրըը-պան, և այլն : Նոյնպէս ապ մասնկան հետ, ապըը-պարեմ, ապըը-տամբ՝ իբր սրտամբակ բառէ. իսկ եթէ յն. ձՊՇՇՇՇՇՇ (ապտասատիս), այն ժամանակ ապրտամբ. այլ սա շատ հաւանական չէ : Եւ սոյնպիսի բարդութեան մէջ, պտտըը-պարեմ՝ իբր պտտ և պ. սիփէր-եւլ, պատեւլ վահանաւ. պատըը-կամ՝ իբր պատ-պ. շիբէմ՝ կամ շիբեան՝ (") փոր, որովայն պատի՝ նմանութեամբ, զուրս ցցուած մասն :

Սովորութիւնն ըզ և ըս գրելու՝ կը սկսի երեւիլ ժԲ դարու մէջ, և այն՝ հազուագիւտ, ըստ հետազօտած գրչագրացս՝ մանր երկաթագիր և փոքրագիր աւետարանի մի մէջ միայն, գրուած ՚ի Հոռովմօսի վանս : Ետոյ սա-կաւ ծաւալ առնչով մինչև ցԺԶ դար, կ'ընդհանրանայ և կը վարի՝ մեր վը-կայութիւն հանած գրչագրաց յետագայ օրինակութեանց և այնուհետև նոր յօրինուած գրոց մէջ : — Իւր ազբեր մասամբ յետոյ՝ յէջ 537 :

Բայց շարականք՝ սկսեալ ինձ ծանօթ հնագունէն՝ որ է ժԲ դարու, ընդհանրապէս կը գրեն ըզ և ըս՝ համեմատ արդեաց : Սակայն այդ՝ թերևս մասամբ զարտադրութիւն է հնագոյն գրչագրերէ, որոց հետք երբեմն դեռ կը տեսնուին իւրեանց մէջ, և մասամբ՝ երաժշտական ազատութեան արդիւնք, որ յօժարած տեղը՝ բառից մէջ և գուրս՝ յարմար թէ անյարմար՝ ը տառը կը յաւելու կամ կը ջնջէ. յորում ուղիղ գրչութիւնն՝ մասնուած է եղա-նակի քմաց. այդ շատ յայտնի է շարականաց մէջ :

Բագրատունին (1383. ծն.) մասնաւորապէս կը պնդէ զ նախորի ըզ հնչման վերայ, ՚ի վկայութիւն կոչելով ոտանաւորքը և գրադարձքը հնոց,

որոց գրչագիրք շատ յետոյ են՝ մեր մօտ՝ քան ժիՅ դար, և հետևաբար ոչ ինչ զօրաւոր հին գրչութեան դէմ: Կը յիշէ շարականի ըզիւզ և ըզխաճակ, և Շնորհալայն ըզեւթնարփի բառերը, նոյնպէս տաղաչափից ըլլաւոր, ըզս֊ քանչելի, ըզստին՝ և այլն յէջ 642, որք՝ — եթէ ոմանց ը զայէն հետի գրելի չէ՝ իրր ոչ մասն բառի, որպէս՝ ը զընա, քան ը գառալին, — ար֊ դէն անկանոն ձևեր են, հակառակ թէ հին և թէ նոր ծանօթ սովորու֊ թեանց և իւր իսկ ասացածին յէջ 641, ծնունդք՝ նոր սովորութեան հե֊ տևող՝ այլ կանոնացն անդէտ մտաց: Կը յիշէ ց նախորի յայտնի սխալ, և ո՛ր գիտէ՝ ի՛նչ անխտահելի հեղինակի կամ գրչագրի արդիւնք՝ ըց հաղու֊ գիտ ձև մի՛ բաղաձայն և ձայնաւոր տառից մօտ, որ կը հաւատէ մանա֊ ւանդ՝ թէ երբեմն գ և ց միապէս հնչուելով զը և ցը, երբ յետոյ զը եղեր է ըզ, ցը ևս տպիր կարծեօք ըց է համարուեր՝ այն իրաւամբ որով ստալինն: Կ՛առարկէ զը գրելէն ծագելի խառնակութիւն մի, որ կարծեմ երբէք չէ ծա֊ գած ուրիշ շատ գրութեամբ և ձայնիւ նման բառից մէջ:

Ասելով՝ թէ զը և ար պէտք է հնչել միշտ, չեմ ժխտեր ո՛ր և է խըս֊ րութիւն զոր կարևոր է նկատել: Այսպէս և ընդ ա տառի շատ անգամ կը հնչուի ըս. որովհետեւ առ սկիզբն ունող բառերն յաճախ ածանցուած են ըստ նախորդէն՝ որպէս ըսի յէջ 530, բաց ՚ի սակաւուց՝ որ չեն նոյնպիսի. և այն ժամանակ առ պիտի հնչուի սրտ: Սակայն առ մասնկան նախորի լինելն կամ չլինել աձէն բառի մէջ ստուգել դիւրին չէ. այնպէս որ մինչ « ստեղծանել » բառն կարէր կարծուիլ՝ թէ կազմուած լինի այսպէս՝ ըստ֊ եղծանել, որ է՝ հանել յեղծմանէ, երկու գրչագրաց մէջ գրուած գտայ սը֊ տեղծեր, սը֊տեղծ. որով կարծեցեալ կազմութիւնը չունի. միայն եթէ դա սխալ չէ, և կամ հին սովորութիւնն չպահանջէ՝ առ կրճատ նախորին այլ բառից հետ ածանցուած՝ կարգալ միօրինակ սրտ, հակառակ նորա երբեմն ըստ ամբողջ գրութեան քանի մի բառից սկիզբը՝ համեմատ բառգրոց, որ առաջնոյն պէս հի՛ն է թէ նոր՝ չեմ գիտեր:

Չը և ար յետոյ քան ի՛ ցը և զը նախորիս իրեանց ը կը կորուսանեն խօսից մէջ, որպէս կը վկայեն նախնեաց տաղաչափական երկոց վանկեր. ինչպէս՝ զըգեստ կը լինի ի֊զգեստ, ցը֊զգեստ, զը֊զգեստ. և սըտոյգ՝ ի֊ս֊ տոյգ, ցը֊ստոյգ, զը֊ստոյգ¹. զի նախորաց ի և ը ձայնաւորք միանալով բա֊ ուրից գ և ա տառից հետ, սոցա հետևորդ եկամուտ ըն աւելորդ կը լինի: Նոյնպէս շրտապ կը լինի ի֊շտապ և այլն. սոյնպէս այլ նման բառք: Նոյն֊ պէս և աւելի ևս՝ զօղիչ ձայնաւորաւ բարդութեանց մէջ, որպէս՝ պայծառապ֊

1. Այս տեղ, որպէս և յետոյ, եկամուտ ը տառը նախորաց և այլ մասնկանց տուինք՝ և ոչ բառից, հիմնուելով միւս սովորութեան վերայ, ցը֊խանարհ, ցը֊ փղզունս, չը֊գոյ, չը֊մարթու, հը֊գօր, հը֊մուտ (իր թափանցող) և այլ սոյնօրինակ բառից մէջ, որոց ճի բառից չլիբարբերիլ, զի չունին զայն ՚ի հնչման, այլ նախ֊ դրաց և մասնկանց:

գեաց, մեծագրօս, տղայասպան, մեծասպաս, նորասքանչ. և այլն: Նոյն-
պէս չէ մակրայի հետ, որպէս՝ չէ-զգամ, չէ-զգենում, չէ-ստուգեմ, չէ-
սպառեմ: Նոյնպէս հը թարմատարի հետ, որպէս սրկայ՝ հը-սկայ, սրկեմ՝
հը-սկեմ: Նոյնպէս ըստ կամն և գ նախդիրն կամ մասն բառի՝ քերթուածոց
և երգի մէջ, երբ իւր նախորդ բառն ձայնաւոր կամ նայ կամ հ կամ յ
տառի վերջնայ, նայն կամ այլն յառաջ քան զինքն ունելով ձայնաւոր
տառ. զոր օրինակ, Յուցանելով նրմա գհոգեորական առողջութիւն. Պար-
գեւէ գկենդանութիւն. Չի գհոգիս մարդկան լուսաւորեցին. Տուր սրմա զան-
շարթ քո գիտադադութիւն. Յանձն առեր կամաւ զխաչն և զթաղումն. (այս
վերծանութիւն անուշ է յարձակ գրութեան, և ընտիր՝ քերթուածոց մէջ). —
Որ գնախամօրըն գյանցանս. Որ զթագաւորն ամենեցուն. Սլերն ՚ի սիրոյ
զսէրդ առաքեաց. Եւ բոտորին այսբր զգալեաց. Սրբբափայլ զգեստուք պըճ-
նեայք: — Նմանապէս և տառն. որպէս՝ Էակցին հօր հետեեալ ստացան
ըզթագրն (զըթագրն) պարծանաց. Որ սքանչելիդ ես ՚ի բարձունքս տէր, և
այլն: Բայց բռնագրօսիկ և առ հարկի եղանակին է այսպիսի սղումն. Էից
ատեղծող արարածոց. Չի ծանոյց մեզ սքանչելի խորհուրդ. Որ ողորմու-
թեամբ զգեցար մարմին. Որք զառ ՚ի Գրիստոս զչարչարանս յանձն առեալ.
մանաւանդ սոյնպիսին՝ տան սկիզբը. Սքանչելի կանայքն աներկիւզ եկին.
Չսքանչելի և զհրաշագործ ըզյարութիւնըն, սքան և զսքան մի մի վանկ
հաշուած: Սլ չէ շատ խորթ այսպիսին. Հալածելով զխաւար մեղաց. Այսօր
և մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խային. այսինքն՝ երբ յետ զային
հանդիպին իս կամ նայ տառեր. Իսկ թէ հանդիպին հ և յ, ըստ կանոնի
կը լինի ըթի զեղչումն. Երբարձ գհոգին ՚ի մարդկանէ. ընդ հրեշտակին գո-
չեսցուք զյարութիւնըն Գրիստոսի: — Այս զանազանութեամբք զը՝ շը և սը
ոչ ոտանաւոր և ոչ արձակ գրութեանց ընթերցման մէջ ոտանաութիւն կը
պատճառեն:

Սակայն ի, ցը, զը նախգրաց և չը մակրայի հետ՝ գ, շ և ս տառք իւ-
րեանց ը կը պահեն գրագարձի ժամանակ. որպէս նախնեաց վերոյիշեալ օ-
րինակաց մէջ, ցըր-կեռուրն, ՚ի սը-պատուց. բայց ինձ կը թուի՝ թէ առանց
հնչուելու. այդ վախճանաւ անշուշտ գրչագրաց ոմանք սկսեալ ոչ շատ հին
դարերէ (ԺԳ) ըթի վերայ կը գնեն սուղ (°) նշանը: Այսպէս պիտի լինին
և սքա, ՚ի գը-գուշութիւն, ցըը-գօն, ՚ի շը-տասպ, ցըը-տեմարան, և այլն:
Նախգրաց մօտ ըն կը պահուի, զի նորա բառի մասն չլինելով՝ հարկ է տողի
ծայրը բառին վանկը ամբողջ գրել վայելութեան համար. բայց հը թարմա-
տարի հետ և բարդութեանց մէջ մի բառ նկատուելով, կը բաժնուին՝ հըս-
կայ, հըս-կել, մեծագրօս, նորասքանչ, և այլն:

Իսկ խօսելով նոյն սկզբնաւորութեամբ յատուկ անուանց նկատմամբ, նոքա
որոց ծագումն հայ է և կամ առանձին իմաստ ևս ունին, այնպիսեաց մէջ
ը միշտ յետոյ գնելի է՝ ըստ օրինի հայ բառից. որպէս Սկայորդի՝ է սը-
կայ-որդի, Սպանդունիք՝ սըպանդ-ունիք, Սպանդարատ՝ սըպանդ-ատատ,

իբր առատ զո՛հ մատուցանող, կամ սրբանդ—առատ՝ պ. հաճոյ, ողջակէզ ընդունելի: — Այն հայ անուանք մէջ՝ որոց սկիզբը նոյն սուր տառից միոյն հետ ուրիշ երկու բաղաձայններ կան, ը առ հարկի նորա և հետևեալ առաջին բաղաձայնի մէջ կը մտնէ. օրինակ իմն, Շընճեր, Սըրկունի կամ Սըրկունի, Սըմբատ: — Դարձեայ յետադաս է Է օտար անուանց մէջ՝ եթէ բնագրի յետադաս ձայնաւոր մի փոխանակած լինի. զոր օրինակ, Ձըբաղեշտ՝ պ. Ձէրատիւշթ, Ձրբուան՝ պ. Ձարուան, Սըպահան՝ պ. Սիփահան՝ ՚ի հնումն, և յԱրաբաց փոխուած իոփահան. Շըմաւոն՝ բն. Սիմէոն, Շըմաւել՝ բն. Սամուէլ:

Բայց երբ ը ձայնն օտար անուանց կամ բառից բնագրաց սկիզբը գտուի, կամ նո՛յն տեղը փոխանակած լինի այլ տառ, հաւանականօրէն ը հնչումն պիտի կանխէ, որպէս ակնարկեցի յէջ 531, ծն. և 532. զոր օրինակ, ըՉմիւռիա, ըզմելին (յն.), ըզմուռս (յն.) և իւր անանցք, ըսկիւթացի, ըՍկեպտիկոս, ըստամբն (յն.), ըՍտեփանոս, ըՍտրաբոն, ըստրատելաա (յն.) ըստաղիոն (յն.), ըբքեմ՝ (յն.), ըՍտահրաշապուհ՝՝ պ. Խստահր—ա—Շապուհ. ըՍտաթեւ՝ յն. Եւ—ստաթէոս անունէ, կամ պարզ ստաթիս կամ ստատիոս՝ ամուր, կամ եւ—ստաթիոս՝ ամրութիւն բառէ. ըՍկելուա՝ յն. սկելուիա, պաշտօն՝ տեսչութիւն: Այս տեղ ըզ և ըս հնչումն հաւանական է նաև այնու՝ զի համազօր է մեր ա տառի ըս հնչման (տես յէջ 531, ծն.), որ թէև ը չեմք զրեր ուսյի հետ, բայց մեղմ կերպով կ'արտասանեմք. այսպէս և այլ լեզուք այդ անուանց սկիզբը: Եւ որպէս մեք առանց գրելու՝ կը հնչեմք զայն ա տառիւ սկսող անուանց և բառից սկիզբը, այսպէս կարելի է մեզ հնչել նաև նոյն և նոյնպիսի օտար անուանց սկիզբը, եթէ չեմ սխալիր:

Վերջ բանիս, այդպէս կարող էին հնչել և նախնիք, և կը հնչէին իսկ անշուշտ: Այս օտար հնչումէն ծագած է ըստ իս՝ ըի տեղափոխութիւնն ՚ի սկիզբն հայերէն խումբ մի բառից, սկսած միջին դարու մէջ և տակաւ ընդհանրացած, առանց իմանալու խառնակելով զմայրենին օտարին հետ: Եւ կամուռ լինելուն վկայ է՝ շատից մի և նոյն հանգամանաց մէջ երկու կերպով ևս հնչուելու անտեղի սովորութիւնն, զոր նկատեցիք յէջ 530. և որ աւելին է, նոյն իսկ մի և նոյն տառից մօտ՝ հակառակ այլ ազգաց միակերպ հնչման, որ յայտնի նշան է անկանոն եղանակաւ մուտ գործելուն մեր մէջ, որպէս սովորական է այդպիսի թերութիւն՝ ամէն նոր և յանգագաստից մտած սովորութեանց ամէն ազգաց մէջ: Եւ մի՛ թէ այդպիսի անհարազատ և անկանոն սովորութիւն պէտք չէ՝ որ խոտելի լինի:

Հ. Վարդան Սոմոնեան